ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26.04. 2018թ.
ժամը17^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՌՀՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պետի տեղակալ, գնդապետ Ս. Բաղասյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 Սույն ընթացակարգի մասով 2018թ. մարտի 29-ին Հակոբ Ռազմիկի Առաքելյանը ներկայացրել է բողոք, պահանջելով

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման գործընթացը և պայմանագրի կնքման գործընթացը:

2. Չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Թիրախային ամբարձիչների» ձեռքբերման գնանշման հարցման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 15.03.2018թ. ժամը 10:00 կայացած նիստի N 3 Արձանագրությամբ կայացված որոշումները «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելը: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին:

Գնումների բողոքարկման խորհրդը 19.04.2018թ. կայացրել է որոշում, որը, սակայն հրապարակվել է 25.04.2018թ.՝ համաձայն որի Հակոբ Ռազմիկի Առաքելյանի բողոքը բավարարվել է (կցվում է): Քանի որ Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումն իրավապարտադիր է, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Հակոբ Առաքելյան ԱՁ-ին:

1.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

1.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատողներ՝ Հ. Բարսեղյան

Ա. Մաղաքյան

Տ. Գասպարյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան